

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՅԻ՝ ՀԱՅՈՑ ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՔԻՉ ՀԱՅՏՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Նիկողայոս Ադոնյը (1871-1942) ի դարի հայագիտության ամենաներհեղինակի դեմքերից է¹: Նա հատկապես հռչակված է բյուզանդագիտության բնագավառում: Չորս տասնյակից ավելի ֆրանսերենով լույս տեսած նրա ուսումնասիրություններից շատերը դարձել են այդ գիտակարգի մնայուն արժեքներից:

Չնայած Ն. Ադոնյի հանրահայտությանը՝ այսօր քչերին են ծանոթ Հայոց Հայսմավուրքներին նվիրված նրա ուսումնասիրությունները: Ն. Ադոնյի գրչին են պատկանում Հայոց Հայսմավուրքներին, Եկեղեցական տոներին ու սրբերին վերաբերող հետեւյալ աշխատությունները՝ «Տօնացոյց» (ձեռագիր, հայերեն 600 էջ), «Ճաշոց» (ձեռագիր, հայերեն 150 էջ)², ինչպես նաեւ «Դիտողություններ Հայոց Հայսմավուրքների մասին» հոդվածը³ եւ «Տօնք եւ Սուրբք Հայաստանեայց Եկեղեցոյ» հոդվածաշարը⁴:

Հայոց Հայսմավուրքների ուսումնասիրության բնագավառում Ն. Ադոնյի վաստակը ընթերցող հանրությանը ծանոթացնելու նպատակով ամսագրի այս համարում ներկայացնում ենք նրա «Դիտողություններ Հայոց Հայսմավուրքների մասին» ֆրանսերեն հոդվածի՝ Մարիամ Ապրեսյանի թարգմանությունը⁵:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1 Նիկողայոս Ադոնյի գրական ժառանգության մասին տե՛ս Գ. Ն. Յուզբաշյան, Նիկողայոս Ադոնյի գիտական ժառանգությունը, ՊԲՀ, թ. 4, 1962: Պ. Ն. Հովհաննիսյան, Նիկողայոս Ադոնյ, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 17-18:

2 Երկուսն էլ գտնվում են Համազգայինի Բեյրութի գրական պահույնի պրոֆ. Ն. Ադոնյի ֆոնդում:

3 N. Adontz, Note sur les synaxaires arméniens, տե՛ս "Revue de l'Orient Chrétien", Paris, 1924, t. 24, p. 211-218:

4 N. Adontz, Les fêtes et les saints de L'Eglise Arménienne, տե՛ս անդ. 1927-1928, t. 26, p. 74-104, 225-278. Հոդվածաշարն այստեղ ընդհատվել է եւ միայն տարիներ անց՝ 1980 թ. է շարունակությունը լույս տեսել Հայր Շարլ Ռենուի աշխատասիրությամբ, տե՛ս Ch. Renoux, Les fêtes et les Saints de L'Eglise Arménienne de N. Adontz, "Revue des Etudes Arméniennes", Paris, 1980, t. XIV, p. 287-305, t. XV, 1981, 103-114. Սույն բնագավառում Ն. Ադոնյի աշխատանքների ընդհանուր բնութագրումը տե՛ս Պ. Հ. Հովհաննիսյան, Նիկողայոս Ադոնյի «Հայկական Վարք Սրբոց Ժողովածուները», անտիպ աշխատությունը. «Աստվածաշնչական Հայաստան». միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2005, էջ 328-333:

5 Հոդվածը տպագրվել է R. Graffin-ի հրատարակած "Revue de l'Orient Chrétien" հանդեսում (vol. 24, 1924, էջ 1-8):

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂՈՆՅ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱՅՈՑ ՆԱՅՄԱՎՈՒՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արդեն շար փարիներ ի վեր “Patrologia Orientalis” հրապարակչությունը լույս է ընծայում Նայոց Նայսմավուրքի ֆրանսերեն թարգմանությունը բնագիր օրինակով հանդերձ: Իր այս արժեքավոր աշխատությամբ դոկտոր Գ. Բայանը¹ մեծ ծառայություն է մատուցում Եւրոպայում հայագիտության փարածմանը՝ գիտական աշխարհի ուշադրությունը հրավիրելով սրբախոսական գրականության մի կարևոր ճյուղի վրա: Այս առիթով մեզ օգտակար է թվում պարմական մի համառոտ ծանոթություն փալ Նայոց Նայսմավուրքի փարքեր հրապարակությունների մասին:

Նայոց Նայսմավուրքն առաջին անգամ փպագրվել է 1706 թ. Կ. Պոլսում եւ վերափայլել նույն քաղաքում 1726 թվականին: Մեկ այլ փպագրություն լույս է փնտել 1834 թ. Կ. Պոլսի հայոց պարբիարքարանի հովանավորությամբ դարձյալ Թուրքիայի մայրաքաղաքում: Երկու հմուտ անձնավորություններ՝ դպիր Գրիգոր Փեշպրմալճյանը եւ Մարթոս վարդապետը (հեղափոխում Կ. Պոլսի հայոց պարբիարք եւ ապա Ամենայն Նայոց Կաթողիկոս), Թուրքիայի Նայոց Ազգային խորհրդի հանձնարարությամբ պարտասպեցին այս վերջին հրապարակությունը: Գրիգոր դպիրն իր առաջաբանում մեզ փալիս է մի քանի արժեքավոր փնտելություններ առյն հրապարակության վերաբերյալ:

Նայոց Ազգային ժողովը, անբավարար համարելով նախորդ հրապարակությունը, մտածում է նոր ձեռագրերի փրա հիմնված մի նոր հրապարակության մասին:

«Այդ ժամանակ,- պարմում է Գրիգորը,- կայսեր հրամանով այսփրեղ ժամանեց Տեր Կիրակոսը՝ Կիլիկիո Տան Կաթողիկոսը: Իմանալով նրանից, որ Մսի կաթողիկոսարանում է գտնվում Տեր Իսրայելի Նայսմավուրքի ընփրի մեկ կրկնօրինակը, խնդրեցինք նրան, որ շրապ այն մեզ ուղարկի հրապարակելու համար: Կաթողիկոսական Աթոռ վերադառնալուց հեփո Տեր Կիրակոսն այդ կրկնօրինակն անմիջապես ուղարկեց մեզ»:

Ձեռագիրը գրված էր մագաղաթի վրա բոլորգիր փրառելով, Նայոց բարեպաշտ թագավոր Օշինի եւ Կոստանդին Կաթողիկոսի օրոք: Ձեռագրի սկզբից եւ վերջից մի քանի թերթեր ընկած են, պակասում է ամբողջ նախաբանը եւ վերջի ծանոթագրությունները, որի պարճառով գրության փրաբեթիվը անորոշ է: Բայց քանի որ Օշինը թագադրվել է 1308 թ. եւ թագավորել է 12 փրաթի, իսկ յուրաքանչյուր վարքի վերջի հիշափակարանները փրեղեկացնում են, որ թագավորը նոր էր օծվել եւ նրա ավագ որդին դեռ մանկահասակ էր, դրանից եզրակացնում ենք, որ ձեռագիրը գրված է եղել նրա թագավորության առաջին կամ երկրորդ փրառում, այսինքն՝ 1309 թվականին:

Արդարեւ, սեպտեմբերի 4-ի հիշափակարանում կարդում ենք. «Մոցին բարեխոսութեամբ, Բրիպոս Աստուած, ողորմեա սրացողի գրոցս բարեպաշտ թագաւորիս մերոյ Աւշնի եւ դեռաբոյս մանկանն իւրոյ Լեւոնի եւ ծնողաց իւրոց եւ բազմամեղ գրչիս՝ Գրիգորի դպրի եւ պարտական քահանայի եւ աւագ երիցո թագաւորին Թորոսի»:

1 Դր. Բայանը Տեր-Իսրայելի Նայսմավուրքը փպագրել է “Patrologia Orientalis”-ի վեց հաջորդական հափորներում՝ հփ. Ա (ամիս Մեհեկան), հփ. Բ (Արեգ), հփ. Գ (Անեկան), հփ. Դ (Մարեթի), հփ. Ե (Մարգաց), հփ. Զ (Նոբրից եւ Անեկաց),- ծնթ. թրգմն:

Սեպտեմբերի 8-ի հիշարարարանում կարդում ենք. «Քրիստոս, զօրացո գնորոգօծեալ բարեպաշտ թագաւորս մեր Աշին եւ զդեաքոյս մանուկն իւր զԼեւոն... եւ այլն»²:

Նույն հրապարակիչը դպիր Գրիգորը, այնուհետև փալիս է մի հակիրճ փնտրություն Նայսմավուրբի կազմության պարմության վերաբերյալ՝ հիմնովելով սրբերի կյանքին առնչվող գործերի մասին իր խմացածի եւ հարկապես Մխիթարյան միաբանության անդամ Նայր Ավգերյանի հաղորդած փվյալների վրա: Նա կարծում է, որ Սսի ձեռագիրը Տեր Իսրայելի Նայսմավուրբի մեկ կրկնօրինակն է: «Patrologia Orientalis»-ի նախաբանում դոկտոր Գ. Բայանը հայտնում է իր ընթերցողներին, որ «Միայն Սսում չէ, որ կարող ենք գտնել Տեր Իսրայելի Նայսմավուրբից ձեռագիր մի օրինակ, նույն ժամանակաշրջանի մեկ այլ ձեռագիր օրինակ գտնվում էր նաև Դքիմում, որտեղից այն եկել հասել է մինչև Փարիզի Ազգային Գրադարան: Մենք այն կվերադարձնենք այնպես, ինչպես որ կա»:

Երկար ժամանակից ի վեր ես զբաղվում եմ հայ սրբախոսական երկերի փաստագրական ուսումնասիրությամբ եւ հուսով եմ, որ վերջապես կկարողանամ այն շուրջով հրապարակել:

Առիթը ներկայացած լինելով՝ ուզում եմ հայտնել, որ Գրիգոր դպիրի կողմից Կ. Պոլսի հրապարակության վերագրումը Տեր Իսրայելին (վերագրում, որը հետագայում կրկնվել է Գ. Բայանի կողմից) պետք է համարել ոչ ճիշդ: Այսուհանդերձ այս հաստատումը բնագրի փոփոխությունից ոչնչով չի նվազեցնում այս երկու հրապարակությունների կարևորությունը: Դոկտոր Գ. Բայանի կարարած գործը, հիրավի, արժեքավոր է, բանի որ մեկ հրապարակության մեջ այն մեզ մարտցում է Նայսմավուրբի երկու խմբագրություններ, որը շուրջով կտեսնենք:

Նախ՝ ովքեր հետաքրքրվում են մեր ուսումնասիրած հարցով, անշուշտ գոհ կլինեն խմափառով, որ գրադարաններում իմ հետազոտությունները թույլ են փվել ինձ բացահայտել այն ձեռագիրը, որի մասին խոսում է դպիր Գրիգոր Փեշարմալճյանը եւ որն օգտագործվել է նրա կողմից իր հրապարակության մեջ: Այդ ձեռագիրն այժմ գտնվում է Վենետիկի Մխիթարյան Նայրերի գրադարանում 710Ը.Գ համարանիշով: Դա հրաշալի մի ձեռագիր է՝ գրված մագաղաթի վրա բոլորգիր փառերով, ինչպես այդ մասին վկայում է հրապարակիչը 1834 թ., եւ պարզապես ի ծառայություն Սսի արքունական պալատի: Այսպես գտնում ենք նաև այլ մանրամասնություններ, որ մեզ փալիս է նույն հրապարակիչը: Սեպտեմբերի 4-ին եւ 8-ին գրված հիշարարարանները նույնպես գտնվում են այսօր: Նույն հիշարարարանը հաճախ կրկնվում է վկայաբանությունների վերջում: Սեպտեմբերի 1-ին գրված հիշարարարանում կարդում ենք. «Տեր Աստուած, բարեխօսութեամբ ծնաւոյի բո եւ Սիմէոնի սիրակեցոյն որոյ այսօր է յիշարակ, ազնեա թագաւորիս մերոյ Աշնի եւ դեաքոյս մանկանն իւրոյ Լեւոնի եւ բազմամեղ գրչիս Գրիգորի դպրի»:

Ժամանակակից անձանոթ մի ձեռք փակագծերի մեջ է վերցրել հիշարարարանում եղած անունները եւ ավելացրել՝ «ամենայն հաւատարեցեալ եւ ողորմեա մեզ»:

Այս եւ այլ կարգի ուղղումները, ինչպես նաև այն նշումները, որ մենք փնտրում ենք լուսանկարներում, թվում է, թե հրապարակչի ձեռքի գործն են: Բացի այս ցուցումներից, բնագրի համեմատությունն է, որ անվիճելիորեն ապացուցում է այս երկու ձեռագրերի նույնությունը: Ավելին, նախարարված վկաների հիշարարարանները նույն կարգն ունեն: Այս ձեռագրի

2 Տե՛ս «Յառաջաբան Յայսմավուրբ ըստ կարգի ընթերցագոյն օրինակի Տեր Իսրայելի», Կ. Պոլիս, 1834 = ՌՄԾԳ:

մանրամասն ուսումնասիրությունն ինձ բերում է այն համոզմանը, որ այն Տեր Իսրայելին վերագրելը սխալ է և անհիմն: Դա Գրիգոր Անավարզեցու Նայսմավուրքի մեկ կրկնօրինակն է, ինչպես քիչ հետո կրեսնենք:

Արդարև, Նայոց Նայսմավուրքի խմբագրության պարամությունը մեզ է ներկայանում չորս փուլերով.

1. Առաջին անձը, որ այն շարադրել է, եղել է մի վանական, որի անունը գրվում է Իսրայելի՝ սեռական հոլովով: Նա ծագումով Խաչենի հայ իշխանական տոհմից էր (Խաչենը գտնվում է Շուշի և Գանձակ (Ելիզավետպոլ) քաղաքների միջև: Լինելով ժամանակակիցը գիտնական Վանական վարդապետի, նա նրա և իր եղբոր՝ Գրիգորի հետ ներկա է գտնվել 1240 թ. Գանձասարում Զալադուա իշխանի կառուցած եկեղեցու օծմանը: Նա և իր եղբայրը վախճանվել են 1249 թ. և թաղվել Գանձասարի մոտ գտնվող Դադի վանքում:

Այն մի քանի տասնյակ Նայսմավուրքներից, որոնց առիթ էմ ունեցել մոտիկից ուսումնասիրելու, նաև միայն իմ կողմից քննված ուրիշ շար Նայսմավուրքներից էս գրել էմ միայն մեկը, որը կրում է Տեր Իսրայելի անունը: Այն նույնպես պահվում է Վենետիկի Մխիթարյանների մոտ 631 Պ. և համարվ: Այս Նայսմավուրքում գտնվող մի երկար հիշատակարանում պահպանվել են հետևյալ արժեքավոր տեղեկությունները. «(Գ) որ յնպոյ կարգեալ եղև ըրվանդակ քանքն ևոցա աշխարութեամբ Տեր Իսրայելի ի խնդրոյ Զալադուայիս տեառն Խաչենոյ հրամանաւ Վանական վարդապետի և հարազարին Գրիգորոյ Տեր Իսրայելի, զի նոքա հրամայեցին նմա հայելով ի համբերութիւն և ի հնարիմաց գիտութիւն նոքա, զի ջան եղեալ գրցել զար նահապետութեան սրբոցն, որ գրեալ կա ի լիակարար պարամութեան նոցա, համառաւելով նմա զսքանչելի կարարումն նոցա: Եղ ընդ այլ կարգի և զայսմաւորս, զոր միաշունչ եղեալ անսխալ գրարին կարարեն»:

Սա այն միակ հավասարի աղբյուրն է, որ մենք ունենք Նայսմավուրքի առաջին հեղինակի մասին: Այդուհանդերձ այսպեղ հիշատակված անձնավորությունները ծանոթ են նաև այլ աղբյուրներից:

Պարմիչ Կիրակոս Գանձակեցին ծանոթ է եղել Զալադուա իշխանին, որը Խաչենի Վախթանգ իշխանի երեք որդիներից մեկն էր: Նա հիշատակում է նրան Գանձասարում՝ նրա կառուցած եկեղեցու կապակցությամբ: Եկեղեցու օծման օրը հրավիրվածների թվում էին նաև Խաչենի սուրբ վարդապետներ Գրիգորը և Տեր Եղիան, որոնք ազգականներ էին. «Անդ էին և սուրբ վարդապետքն Խաչենոյ Գրիգորիս և Տեր Եղիա հարազատք միմեանց»³:

Իմ ուսումնասիրությունների համաձայն, այս երկուսը մեր հիշատակարանում իրենց համաճանաչելով նշված նույն անձերն են՝ մեկը կոչվում է Գրիգոր, իսկ մյուսի անունը, որ կրճար է գրված, պարճառ է դարձել հնարավոր երկու ընթերցումների՝ Տեր Իսրայել կամ Տեր Եղիա, որոնց ազգակցությունն արտահայտված է «հարազատք» բառով, որը կարող է նշանակել եղբայրներ կամ զարմիկներ: Առաջին ընթերցումն ինձ ավելի վավերական է թվում: Գուցե մի օր Դադի վանքում մենք կգտնենք նրա փապանագիրը, որն ի հայտ կբերի Նայսմավուրքի հեղինակի ճշգրիտ անունը:

Տեր Իսրայելը վախճանվել է 1249 թ., ուստի Նայսմավուրքը գրված պետք է լինի այս թվականից առաջ: Նավանական է, որ իշխանը և Վանական վարդապետը Տեր Իսրայելին պարվերը փվել են 1240 թ. հենց եկեղեցու օծման օրը:

3 Կիրակոս Գանձակեցի, Պարամութիւն Նայոց, Թիֆլիս, 1909, էջ 146:

Ի՞նչ խնդիր է դրված եղել Տեր Իսրայելի առջև և ինչպե՞ս է նա այն լուծել:

Այս երկու հարցերին մենք մտադիր չենք անդրադառնալ ներկա աշխարհային մեջ: Բավական է նշել, որ Տեր Իսրայելի այս գործը հիմնված է թարգմանված մի հին վարքագրության վրա, որին նա ավելացրել է երկրորդական կարգի հիշարակություններ, որոնք սկսում են «յայտնաուր» (այս օրը) բառով: Նենց այսպեղից էլ առաջացել է «Յայտնաուրը» (այս օրերին) անվանումը, որն այնուհետև փոխարինվել է «martyrologe» (վկայաբանություն) օտար բառով: Դարելով այն միակ օրինակից, Տեր Իսրայելի Նայսմավուրքը սկսվում է հունվարի մեկից:

2. Տեր Իսրայելի այս գործը հագիվ էր մեջբերել եկել, երբ Կիլիկիայի արքունական մայրաքաղաք Սսում երեսան եկավ մեկ այլ Նայսմավուրք: Այն շարադրված էր Կիրակոս անունով մի գիպրական վարդապետի կողմից 1269 թվականին:

Այսպեղ խոսքը բառիս բուն իմաստով մի նոր խմբագրության մասին չէ: Անփոփոխ պահելով իր նախորդի աշխարհայինությունը, հեղինակը ջանացել է այն հարստացնել՝ ավելացնելով շուրջ 170 նոր հիշարակություններ:

Կիրակոսի Նայսմավուրքը մեզ է հասել քարքեր ընդօրինակություններով, այն սկսվում է հայոց թվականության առաջին օրից: Ինձ հանդիպած երկու ընդօրինակություններում պահպանվել է հենց հեղինակի գրած հիշարակարանը հերեյալ բառերով. «Յուսովն Աստուծոյ և սիրով սրբոց նորա նուսապոգի Կիրակոս վարդապետ Արեւելցի ի միասին հաւաքեցի գրաւն սրբոցս Աստուծոյ ըստ իւրաքանչիւր յիշարակի աւուրց: Գրեցի ևս պարմութիւնս նոցա, որոց ոչ էր եղեալ ի գիրս յայտնաւորացն և խառնեցի ընդ նախակարգսն ևս աղաչեմ գրաւնողս և զգրողս գրել ևս զայս յիշարակարանի, զի ևս դուք գրեսցիք ի գիրն կենաց, և որ բառնայ զմերս ջնջեսցի ևս ինքն ի գրութենէն կենաց:

Եւ եղև իրականութիւնս այս ի թիվս ՉԺԸ, յաշխարհիս Կիլիկեցոց ի Սիս մայրաքաղաքի ի թագաւորութեան Ներսէս և յառաջին ամի իշխանութեան որդոյ նորին Լեւոնի ԿԶ ամի կենաց պաւղիսութեան մերոյ, յորում աւարսն եղև ի փառս Աստուծոյ յաւիտեանս ամէն:

Եւ ճառք, որ յաւելաք մեր ընդ հիմն խառնեալ ճՏ անուամբն և շնորհաւսն Աստուծոյ ամէն»:

Այս հիշարակարանը գրվում է 1435 թ. 189թ. գ ձեռագրում՝ Սուրբ Ղազարի Մխիթարյանների մոտ:

Մխիթարյան հայրերից գիպրական Տաշյանը Վիեննայի Մխիթարյանների գրադարանի ձեռագրերի իր նկարագրության մեջ բաց է թողել այս կարևոր փաստաթուղթը: 1439 թ. թիվ 7 ձեռագիրը ուսումնասիրելիս, որը Կիրակոս Արեւելցու Նայսմավուրքի ընդօրինակությունն է, ևս հանդեպեցի այս նույն հիշարակարանին 595Բ էջում:

Վիեննայում Նայր Տաշյանի մոտ գրվող թ. 219 Նայսմավուրքի մեկ այլ ընդօրինակության մեջ նույնպես պահպանվել է հեղինակի հիշարակարանը՝ ավելի համառոտ շարադրանքով: Սեպտեմբերի 8-ին գրված հիշարակարանում կարդում ենք. «Կիրակոս վարդապետ Արեւելցի ի վանաց Գեպկցի գյարմարիչ ևս զլուսաւորիչ այսմ կրակիս ևս զսրացող սորա զԱռաքել անարժան եպիսկոպոս» և այլն:

Կիրակոս Արեւելցու Նայսմավուրքի ամենահին ընդօրինակությունը գրվում է Փարիզի ազգային գրադարանում, որի հիման վրա էլ կարարվել է նրա հրատարակությունը

“Patrologia Orientalis”-ում: Բարեբախտաբար գլխավոր հիշարակարանում պահպանվել է ձեռագրի գրության թվականը.

«Այդ գրեցաւ թուսափայլ եւ պարտական րառս, որ գաղափար ունի ինքեան գրաւ-նախմբութիւն րաւնից րէրոնականաց, մարգարէից եւ զսրբոց առաքելոց եւ մարտիրոսաց եւ զհամա(րէն). . . վերջնոցն. . . հայրապետաց (ի թուականութեա)նս հայոց ՉԿԵ. . . (ժա-մանակի. . . եաց. ի ր(էրութեան րեառն Կոստանդի)այ հայոց կաթողիկոսի կեսարացոյ եւ ի թագաւորութեան հայոց Աշնի եւ եպիսկոպոսութեան գ(աւառիս)» . . .

Համաձայն այս րեղեկության՝ ձեռագիրը գրվել է հայոց թվականության 765 թ., (այն է՝ մեր թվականության 1316 թ.), հետևաբար այս ձեռագիրն ունի նույն րարիքը, ինչ 1834 թ. հրատարակված Հայսմավուրքի համար օգտագործված ձեռագրի րարիքը:

Ինչ վերաբերում է հեղինակի ինքնությանը, ապա դարելով մի շարք փաստերից՝ ստիպված ենք այս հեղինակին նույնացնել հայրնի պարմիչ Կիրակոս Գանձակեցու հետ:

3. Երրորդ անգամ Հայոց Հայսմավուրքը վերանայել է Գրիգոր եպիսկոպոս Անավար-զեցին, որը հետագայում բարձրացավ հայոց հայրապետական գահին Գրիգոր Է: Անավար-զեցի անունով (1295-1307 թթ.): Նրան հաջորդեց Կոստանդին Կեսարացին՝ մի մարդ, որի անունը հիշարակված է [Փարիզի] Ազգային Գրադարանում գտնվող 1316 թ. ձեռագրի հի-շարակարանում:

Այն, որ Գրիգորն իրոք շարադրել է մի Հայսմավուրք, դա ապացուցում է Մխիթար Ապարանցին իր մի շարք հստակ վկայությամբ. «Սա էր հրաշալի եւ շնորհալի վարդապետ ... բազում պարմութիւնս վկայից ի հռովմայեցոց եւ ի յունաց եւ յասորոց թարքմանեաց ի հայս, որպէս ցուցանէ մեծ Այսմաւորքն իւր»:

Գրիգոր Անավարզեցու աշխատության գեղեցիկ եւ շքեղ ընդօրինակությունը, որը կա-րարված է Օշին թագավորի համար, այն նույնն է, որի մասին մենք վերը նշեցինք կապված Փեշարմալճյանի հրատարակության հետ:

Ինձ ծանոթ է նաեւ դրա մեկ այլ 1691 թ. ընդօրինակությունը, որը գտնվում է Սուրբ Ղա-զարի Մխիթարյանների գրադարանում թ. 402բ.գ կողով: Այն պարաստվել է 1428 թ. մաս-նակիորեն կարարված եւ 1444 թ. ավարտված մի ընդօրինակության վրայից: Նկարքերի է, որ այս ընդօրինակության բնօրինակը բերված է եղել Կիլիկիայից՝ Սյունիանու Օրբելյա-նի կողմից, որի մասին վկայում է հիշարակարանը: Մենք գիտենք, որ Օրբելյանը 1287 թ. Սյունյաց աշխարհից գնում է Կիլիկիա մկրտապոլիս օծվելու, որտեղ նա մնաց երեք ամիս, ապա վերադարձավ իր աթոռանիստը: Այդ թվականին Գրիգոր Անավարզեցու Հայսմա-վուրքն արդեն պետք է, որ շարադրված լիներ:

Գրիգորի աշխատությունը հիմնված է Կիրակոս Արևելցու աշխատության վրա: Վեր-ջինիս ավելացվել են մեծ թվով լրացուցիչ հիշարակություններ, որոնք վերաբերում են մինչ այդ Հայ Եկեղեցուն անձանոթ սրբերին: Այդ շրջանում շարունակվում էին նաեւ կրոնական անվերջանալի թեժ հակաճառությունները: Մեր հեղինակը համարվում է միաբարական խմբակցությանը հարող անձնավորություն եւ որպէս այդպիսին՝ պայքարում էր ազգա-յին բաղաբականության կողմնակիցների դեմ: Նրա աշխատությունը զգալիորեն ազդված է այդ բանավեճերից եւ իր վրա կրում է հեղինակի կողմնապահության ցայտուն դրոշմը: Նա անհրաժեշտ է համարել իր Հայսմավուրքում րեղ հարկացնել լսարին սրբերին, որոնք

Նայ Եկեղեցու կողմից երբեք ընդունված չեն եղել, սակայն նրա այդ նախաձեռնությունը ոչինչ չփոխեց: Անձնապես ես գրնում եմ, որ այս կերպի շուրջ պետք չէ նրան շար մեղադրել: Չի կարելի ասել, թե նա մարտիրոսություն է ունեցել նոր սրբեր ներմուծելու: Իր Նայսմավորքում նշելով նրանց անունները՝ նա միշտ գործածել է «լապինների մոպ» կամ «հույների մոպ» արքայապետությունը՝ այդպիսով հեղափոխելով գույր ուսուցողական նպատակ. նա ցանկանում է իր հայրենակիցներին ծանոթացնել օտարազգի մարտիրոսներին: Գրիգորը չի վերադարձրել այս հավելյալ նախադասությունների վարքը, նա բավարարվում է պարզապես նրանց թվարկելով: Ի մի բերելով այս հիշարարությունները՝ կարող ենք վերականգնել հունական և հռոմեական եկեղեցիների եկեղեցական կամ սրբախոսական փոնագույցը, որն օգտագործել է Գրիգորը ԺԳ դարի վերջում:

4. Նայսմավորքի չորրորդ և վերջին խմբագրողը Գրիգոր Խլաթեցին է եղել (1353-1425 թթ.): Նա Վանա լճի ափին գրնվող Խլաթ կամ Ախլաթ քաղաքից էր՝ Ծերենցների ընտանիքից: Նա ծանոթ է եղել մանավանդ այս անունով: Որպես վանական նա ապրում էր Արծկեի Սուրբ Սյուրիանոս վանքում, որը նույնպես գրնվում էր Վանա լճի ափին: Եղել է հռչակավոր Նովիան Որոտնեցու աշակերտը և ընկերը Գրիգոր Տաթևացու, որոնք ավելի ուշ դարձան Նայ Եկեղեցու մեծանուն առաջամարտիկներ: Նա դաստիարակվեց ազգային լավագույն ավանդույթների մթնոլորտում: Թովմա Մեծոփեցին, որ նրան անձամբ ճանաչում էր, գրել է նրա կենսագրությունը և գովեստի խոսքեր ասել նրա մասին. «այլ և երկրորդ վկայասեր (յ)անուանեցաւ ի վերջին ժամանակս և յերին դարս, զի ժողովեաց զիրս բազումս ի մերոց և յարարաց, զհնացեալսն և զեղծեալսն, զծածուկ և զանյայր պարմութիւնս ամենայն սրբոց ի խաւարէ ի յոյս (յ)ածեալ, և արար զգիրս Յայսմաւորաց յորախութիւն և ի ցնծութիւն (յ)ամենայն եկեղեցոյ մանկանց» (ձեռագիր 1160. ա. գ. յուն. 5)

Յոթանասուն փարեկանում նա գնում է Երուսաղեմ և ուսումնասիրություններից երկու փարի հետո՝ վերադարձին, նախադասվում է իր վանքում 1425 թ. քրդերի հարձակումից:

Գրիգոր Ծերենցի աշխատությունը գերազանցում է իր նախորդների աշխատությունները և մեզ է հասել բազմաթիվ ընդօրինակություններով: Դրանցից լավագույնը և հեղինակի ապրած ժամանակաշրջանին ամենամոտ իմացական բաժնի թ. 279գ.գ ձեռագիրն է՝ գրված 1441 թ., որը պահվում է Վենետիկի Սխիթարյանների գրադարանում, որի մասին հիշարարվում է Առաքել Դավրիժեցին իր Պարմության I գլխում: Մենք ուսումնասիրեցինք նաև Դարանադում (հյուսիսային Եփրատի փարածքում գրնվող հայկական գավառ, որի կենտրոնը Կամախն է) 1469 թ. կատարված ընդօրինակությունը, որը ես գրնվում է Սխիթարյանների մոպ (ձեռագիր 143. թ.գ): Ծերենցը Կիրակոսի պես իր աշխատությունը սկսում է Նավասարդով՝ հայոց փարվա առաջին օրով, մինչդեռ Անավարդեցին նախընտրել է հերթել հունական փարվան, այսինքն սկսել է սեպտեմբերի մեկով:

Ծերենցն ավելացրել է մի քանի փասնյակ նոր հիշարարություններ, մասնավորաբար այն սրբերի հիշարարությունները, որոնք նախադասվել են մահմեդական լծի դարաշրջանում: Այնպես կան նաև մի քանի հիշարարություններ, որոնք ավելի հին են, ինչպես օրինակ՝ Խաչիկ Աղոռեցուն «Մահակի և Մեսրոպի աշակերտների թվից» հունվարի 7-ի փակ: Այս հիշարարությունը ներմուծվել է 1834 թ. հրատարակության մեջ մայիսի 31-ի փակ:

Այսպիսով Նայոց Նայսմավորքը 1240-ից մինչև 1425 թթ. ունեցել է վերանայման չորս

շրջան, որոնցից ամեն մեկը կախված է նախորդից, և հետևաբար բոլոր խմբագրություններն էլ որպես հիմք ունեն առաջին հեղինակի՝ Տեր Իսթայելի գործը: Այս չորս խմբագրությունները որոշելուց և գոյություն ունեցող բազմաթիվ ընդօրինակություններից լավագույն օրինակները առանձնացնելուց հետո հեշտ կլինե՞ր հրապարակել Նայսմավուրքը այնպիսի ձևով, որ իրարահաջորդ հավելումները զատորոշվեին իրենց համապատասխան անուններով:

“Patrologia Orientalis” հրապարակության մեջ դոկտոր Բայանը մեզ փալիս է Կիրակոս Արևելցու Նայսմավուրքի բնագիրն ըստ լավագույն ձեռագրի՝ համեմատելով Փեշրմալճյանի հրապարակության հետ: Այն բոլոր հատվածները, որոնք պակասում են ձեռագրում, պետք է վերագրվեն Գրիգոր Անավարզեցուն՝ Նայսմավուրքի երրորդ խմբագրողին: Բայանը մտադիր է եղել դրանք գերեզման փակագծերի մեջ: Յավալի է, որ 1834 թ. հրապարակությունը հավաքարմորեն չի կատարվել ըստ ձեռագրի՝ մի կողմ թողնելով լսարին և հույն սրբերի հիշարակությունները, այլապես “Patrologia Orientalis”-ում մենք կունենայինք Գրիգոր Անավարզեցու աշխատությունը ամբողջությամբ Կիրակոս Արևելցու աշխատության կողքին: Փեշրմալճյանի գրչին պարկանող հավելումները հեշտ է վերացնել, օրինակ՝ Մխիթար վարդապետ Սասնեցուն (1337 թ.) վերաբերող հիշարակությունը ապրիլի 4-ին կամ պարսիկ Յուսուփ Թավրիզեցու նահապարակությունը (1417 թ.) ապրիլի 11-ին և այլն:

Երբ դոկտոր Բայանի հրապարակությունն ավարտվի, կկարողանանք այն ամբողջացնել՝ ավելացնելով լսարին և հույն սրբերի հիշարակությունները՝ վերցված 1834 թ. հրապարակությունից: Այս գործը շար հեշտ է կատարել, մանավանդ որ այդ հիշարակություններին հաջորդող տեքստեր ընդհանրապես չկան:

Ֆրանսերենից թարգմանեց՝
Մարիաննա Ապրեսյանը